ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 01

<<ԿՄՀՔ-ԳՀԽԱՇՁԲ-22/12>> ԾԱԾԿԱԳՐՈՎ <<26.04.2022 թ.>> ԿՆՔՎԱԾ <<ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ>> ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ք.Հրազդան** **«03» մայիս 2022թ.**

Հրազդանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ս.Միքայելյանի. որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **<<ՆՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ >> ՍՊԸ-ն**, ի դեմս **տնօրեն Ա.Դանիելյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև **2022թ. ապրիլի 28-ին** կնքված << **Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական>> աշխատանքների** ձեռքբերման մատակարարման

<< **ԿՄՀՔ-ԳՀԽԱՇՁԲ-22/12>>** ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) **7.11** կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ով, հետագա համագործակցության համար կողմերը սահմանեցին սույն համաձայնագիրը՝

**1.1.1** Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածը փոփոխության չի ենթարկվի:

**1.1.2** Պայմանագրի N 2 «Վճարման ժամանակացույց» հավելվածը սահմանել հետևյալ կարգով կցված է համաձայնագրին:

**2. Համաձայնագրի գործողության ժամկետը՝**

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են պայմանգիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

**2.2** Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

**3.Այլ պայմաններ**

**3.1.** Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**3.2.** Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

**3.3.** Սույն համաձայնագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից (յուրաքանչյուրը բաղկացած է երկու թերթից և հավելվածներից), որոնցից մեկ օրինակը հանձնվում է Պատվիրատուին, իսկ մյուս օրինակը՝ Կատարողին:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Հրազդանի համայնքապետարան**

**ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք**

**Հրազդանի ՏԳԲ**

**Հ/Հ 900122001440**

**ՀՎՀՀ 03027114**

**Համայնքի ղեկավար՝**

**-----------------Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ /**

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Նյու արտ նախագիծ» ՍՊԸ**

**Ք.Երևան, Ծարավ Աղբյուրի 55/17**

**«ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ**

**ՀՀ 22048332593000**

**ՀՎՀՀ 01024014**

**-----------------Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ**

Հավելված N 1

«03» մայիս 2022 թ. կնքված

«ԿՄՀՔ-ԳՀԽԱՇՁԲ- 22/12» /02/ ծածկագրով պայմանագրի թիվ 01 համաձայնագիր

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | Չ/Մ | Միավորի գինը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | կատարման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | հասցեն | Ժամկետը |
| 3 | 71241200 | Նախատեսվում է հիմնանորոգել.<br>Հրազդան համայնքի Ջրառատ գյուղի 1-ին փողոցը, Լեռնանիստ գյուղի 2-րդ փողոցի, 2-րդ փողոցից մինչև 4-րդ թաղամաս տանող և 5-րդ թաղամասի միջթաղամասային ճանապարհները, Սոլակ գյուղի 10-րդ և 12-րդ թաղամասերը միացնող և 2-րդ, 4-րդ, 6-րդ և 10-րդ թաղամասերը միացնող միջթաղամասային ճանապարհները, Քաղսի գյուղի 11-րդ, 10-րդ և 2-րդ փողոցները.<br><br>1)Ջրառատ գյուղի 1-ին փողոցը:<br>Ճանապարհի կարգը՝ III, IV<br>• Ճանապարհը բնութագրող կարգը /գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառություն/՝ գլխավոր<br>• Երթևեկելի մասի լայնությունը 4-10 մ<br>• Շարժման գոտիների քանակը՝ երթևեկության երկու գոտի<br>• Ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 780մ:<br>2) Լեռնանիստ գյուղի 2-րդ փողոցի, 2-րդ փողոցից մինչև 4-րդ թաղամաս տանող և 5-րդ թաղամասի միջթաղամասային ճանապարհները:<br><br>• Ճանապարհի կարգը՝ III, IV<br>• Ճանապարհը բնութագրող կարգը /գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառություն/՝ գլխավոր և երկրորդային<br>• Երթևեկելի մասի լայնությունը 4-10 մ<br>• Շարժման գոտիների քանակը՝ երթևեկության երկու գոտի<br>• Ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 1315մ:<br>3) Սոլակ գյուղի 10-րդ և 12-րդ թաղամասերը միացնող և 2-րդ, 4-րդ, 6-րդ և 10-րդ թաղամասերը միացնող միջթաղամասային ճանապարհները<br><br>• Ճանապարհի կարգը՝ III, IV | դրամ | 2 370 000 | 2 370 000 | 1 | Ք.Հրազդան , Սահմանադրության հրապարակ 1 | **Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում :** |

կիրառությունը/` երկրորդային

- Երթևեկելի մասի լայնությունը 4-10 մ
- Շարժման գոտիների քանակը` երթևեկության երկու գոտի
- Ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 1505մ:

4)Քաղսի գյուղի 11-րդ, 10-րդ և 2-րդ փողոցները:
Ճանապարհիկարգը` III, IV

- Ճանապարհը բնութագրող կարգը /գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը/` երկրորդային
- Երթևեկելի մասի լայնությունը 4-10 մ
- Շարժման գոտիների քանակը` երթևեկության երկու գոտի
- Ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 995մ:

Նախատեսվում է`

- Աշխատանքների իրականացման ժամանակ հաշվի առնել ճանապարհային պատվածքը, ծածկի շերտերի քանակը և խտությունը կախված ճանապարհի տեսակից, երթևեկության ինտենսիվությունից, կլիմայից և հիմնատակի պայմաններից:
- Ինժեներական հետազննման իրականացում:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում:
- Ճանապարհի ծրագծի սահմաններում գտնվող ստորգետնյա և վերգետնյա ինժեներական բոլոր գծերի ուսումնասիրություն, անհրաժեշտ տեխնիկական պայմանների ձեռք բերում և ճանապարհի ծրագծի իրականացմանը խոչընդոտելու, իսկ ստորգետնյա գծերի դեպքում նաև ոչ բարվոք վիճակում գտնվելու դեպքում այդ գծերի համար տալ նախագծային լուծում: Ինժեներական գծերի (նաև սարքավորումների) տեղափոխման անհրաժեշտության դեպքում դրանց տեղափոխման նախագծի մշակում և իրավասու կազմակերպությունների հետ համաձայնեցում:
- Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, հիմնանորոգվող տեղամասը հանձնման-ընդունման ակտի միջոցով կապալառու կազմակերպությանը հանձնում՝ տեղանքին ամրակցող նշաններով և բարձրությունների հենանիշերով:
- Աշխատանքների իրականացման ժամանակ հաշվի առնել ճանապարհային պատվածքը,ծածկի շերտերի քանակը և խտությունը կախված ճանապարհի տեսակից, երթևեկության ինտենսիվությունից, կլիմայից և հիմնատակի պայմաններից:
- Գոյություն ունեցող դիտահորերի վերականգնում, անհրաժեշտության դեպքում բետոնե ծածկի բարձրացում ճանապարհի պատվածքի համապատասխան:
- Կառուցվող հետիոտային անցման և աստիճանավանդակի հիմնահատակի խճապատում:
- Բետոնի հարթեցնող շերտի կառուցում,
- Սալիկապատում բազալտե սալերով,
- Նոր ճաղավանդակի կառուցում:
- Նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղաշարժման ճարտարապետական լուծումներ:

Հետազննման վերաբերյալ պահանջներ՝

մշակելու և նախագծային լուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով,

- հետազննման ընթացքում վերանորոգվող, վերակառուցվող, հիմնանորոգվող ճանապարհի երկայնքով <u>առնվազն յուրաքանչյուր 330 մետր տեղամասում, (իսկ նստվածքային տեղամասերում պարտադիր՝ առնվազն 2մ խորությամբ)</u> կատարել հորատումներ՝ ճանապարհային պատվածքի շերտի հաստության, պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների ուսումնասիրման անհրաժեշտ խորությամբ և վիճակի գնահատում:
- հետազննման ընթացքում իրականացնել հիմնանորոգվող տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում:

Նախագծերի նկատմամբ պահանջներ

- Նախագծային փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և նախագծային լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:
- Նախագծերի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝
  - ✓ հողային պաստառի վերականգնում / վերակառուցում / կառուցում (ըստ անհրաժեշտության),
  - ✓ հենապատերի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),
  - ✓ ճանապարհային պատվածքի վերականգնում / վերակառուցում (ըստ անհրաժեշտության),
  - ✓ մայթերի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),
  - ✓ ջրահեռացման համակարգի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),
  - ✓ արհեստական կառուցվածքների վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),
  - ✓ ճանապարհի կահավորում,
  - ✓ անվտանգության տարրերի, ինչպես նաև սև կետերի շտկման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում:

Նշված ճանապարհների նշանակությունը՝ թե գլխավոր, թե կենտրոնական, թե երկրորդական:
Պատվածքի և ծածկի տիպը՝ ասֆալտբետոնե:
Կատարվի չափագրական հետազոտություն, շին. հրապարակի կահավորում ժամանակավոր նշաններով:
Կազմել նախագծա նախահաշվային փաստաթղթերը,
անցկացնել նախագծա նախահաշվային փաստաթղթերի
պարզ փորձաքննություն.
Աշխատանքների դիմաց վճարումը կիրականացվի փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո:

**Աշխատանքների դիմաց վճարումը կիրականացվի փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո:**

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հրազդանի համայնքապետարան

ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք

Հրազդանի ՏԳԲ

Հ/Հ 900122001440

ՀՎՀՀ 03027114

Համայնքի ղեկավար

----------------Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Նյու արտ նախագիծ» ՍՊԸ

Ք.Երևան, Ծարավ Աղբյուրի 55/17

«ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ

ՀՀ 22048332593000

ՀՎՀՀ 01024014

----------------Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

*Հավելված N 2*

*«03»մայիս 2022 թ. կնքված*

*«ԿՄՀՔ-ԳՀԽԱԾՁԲ- 22/12» /02/ ծածկագրով թիվ 01 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| N | (CPV) | Աշխատանքի անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 3 | 71241200 | Հրազդան համայնքի Ջրառատ գյուղի 1-ին փողոցը, Լեռնանիստ գյուղի 2-րդ փողոցի, 2-րդ փողոցից մինչև 4-րդ թաղամաս տանող և 5-րդ թաղամասի միջթաղամասային ճանապարհները, Սոլակ գյուղի 10-րդ և 12-րդ թաղամասերը միացնող և 2-րդ, 4-րդ, 6-րդ և 10-րդ թաղամասերը միացնող միջթաղամասային ճանապարհները, Քաղսի գյուղի 11-րդ, 10-րդ և 2-րդ փողոցների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման, մշակման խորհրդատվական աշխատանքներ | .. . % | .. . % | ... % | ... % | 2 370 000 | 2 370 000 | 2 370 000 | 2 370 000 | 2 370 000 | 2 370 000 | 2 370 000 | 2 370 000 | 2 370 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հրազդանի համայնքապետարան

ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք

Հրազդանի ՏԳԲ

Հ/Հ 900122001440

ՀՎՀՀ 03027114

Համայնքի ղեկավար---------Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Նյու արտ նախագիծ» ՍՊԸ

Ք.Երևան, Ծարավ Աղբյուրի 55/17

«ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ

ՀՀ 220483325930000

ՀՎՀՀ 01024014

ՏՆՕՐԵՆ՝---------Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ